

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 342.4

DOI: 10.56246/18294480-2024.16-433

ՀԱԿՈՔՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ

Գավառի պետական համալսարանի և
Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի դասախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլփոստ՝ hranush.hranti@gmail.com

ՀԱԿՈՔՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Էլփոստ՝ ruzanna.hakobyan@mail.ru

Հոդվածը վերաբերում է Հայաստանի Հանրապետության՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններին համապատասխան կառավարման պառլամենտական ձևին անցնելիս Ազգային ժողովի սրանձնած նոր դերակատարությանը, գործառույթների և լիազորությունների ընդլայնմանը, այդ համարեքստում պարզամավորին ներկայացված սահմանադրական պահանջներին, դրանց վերանայման հիմնախնդիրներին: Առաջադրված նպատակի իրագործման համար անդրադարձ է կատարվել Ազգային ժողովի (ԱԺ) վերահսկողական լիազորություններին, Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ԱԺ պարզամավորի թեկնածուին ներկայացվող ցենզերին և դրանց նպատակահարմարությանը: Օգտագործվել են ինչպես ընդհանուր հետազոտական մեթոդներ՝ համարեքսական, պարմական, վերլուծական, այնպես էլ մասնագիտական հարուկ մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլն: Պարզամավորը՝ որպես բարձրագույն օրենսդիր մարմնի անդամ, իրականացնում է իր գործունեությունը ինչպես ներպետական, այնպես էլ պառլամենտական դիվանագիտության ոլորտներում, մասնակցում հասարակության և պետության համար բախտորոշ որոշումների կայացմանը, հետևաբար նա

պեպք է ունենա կենսափորձ, ընդհանուր աշխատանքային, մասնագիտական գործունեության փորձ, բարձր հեղինակություն, օժտված լինի մարդկային, ազգային որակներով և, անշուշտ, ունենա բարձրագույն կրթություն, դատված չլինի, իսկ տղամարդիկ ծառայած լինեն զինված ուժերում: Կիսապառլամենտական կառավարման համակարգից անցումը պառլամենտական կառավարմանը պեպք է հանգեցնել նաև Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջների առավել խստացմանը, պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումներին, որոնք էլ քննարկման առարկա են դարձել սույն հոդվածում:

Քանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Սահմանադրություն, Ազգային ժողով, պատգամավոր, ցենզ, պահանջներ, լիազորություն, գործառույթ, վերահսկողություն, քաղաքացիություն, կուսակցություն:

Պառլամենտը պետական իշխանության բարձրագույն, ներկայացուցչական մարմինն է, որն իրականացնում է օրենսդիր իշխանություն, հանդես գալիս որպես բազմանձնյա ընտրովի մարմին՝ ինքնուրույն իշխանության մյուս ճյուղերից, և որի անդամներն ունեն հավասար կարգավիճակ¹: Պայմանավորված պետությունների պատմական, ազգային, կրոնական, լեզվական և այլ զարգացումներով՝ պառլամենտի պաշտոնական անվանումները տարբեր երկրներում տարբեր են: Այսպես, Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Իտալիայում, Կանադայում, Չեխիայում և մի շարք այլ պետություններում օրենսդիր մարմինը կոչվում է պառլամենտ, Ռուսաստանում՝ Դաշնային ժողով, Հնդկաստանում՝ Միության պառլամենտ, Իսրայելում՝ Քնեսետ, Ուկրաինայում՝ Բարձրագույն Ռադա, Լատվիայում՝ Սեյմ, Ֆինլանդիայում՝ Էդուսկունտ, Գերմանիայում՝ Բունդեսթագ և այլն²:

Թեև տարբեր ժողովուրդների մոտ պառլամենտն ի հայտ է եկել տարբեր ժամանակներում և ունեցել կազմավորման առանձնահատկություններ, այնուհանդերձ պառլամենտի հայրենիքն ընդունված է համարել Անգլիան, որտեղ ձևավորվեց ժամանակակից խորհրդարանի նախատիպը՝ «Թագավորական ընդհանուր խորհուրդը» (1215թ.)՝ պետության համար կարևորագույն հարցերը

¹. Зеленков М. Ю., Политология для юристов, М., 2000, էջ 60-61:

². Տե՛ս Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, «Տիգրան Մեծ», Երևան, 2007:

քննարկելու նպատակով¹: Թագավորի հրովարտակով ժողովրդի տարբեր շերտերի պատվիրակներից բաղկացած այդ դասային ներկայացուցչական «ատյանին» տրվեց համապետական նշանակություն և լիազորություն՝ իրականացնելու օրենսդիր իշխանություն և վերահսկողական գործառույթներ գործադիր իշխանության նկատմամբ: Անգլիայում պետական կարևորության հարցերը քննարկող և որոշումներ ընդունող մարմինը կոչվեց «պառլամենտ»: Այնուհետև 17-18-րդ դարերում Ֆրանսիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում ևս պետական մասշտաբով ձևավորվեցին օրենսդիր մարմիններ²: Ժամանակի ընթացքում աստիճանաբար սահմանափակվեց միապետի իշխանությունը, և պառլամենտը, ձևավորվելով համընդհանուր ընտրությունների միջոցով, դարձավ հասարակության լայն շերտերի քաղաքական, սոցիալ-տնտեսական շահերի արտահայտիչը, պաշտպանն ու կարևոր հասարակական հարաբերությունների հիմնական կարգավորիչը:

Ժամանակակից աշխարհում պառլամենտներին է վերապահված օրենքների միջոցով կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորման գործառույթը: Պառլամենտն է սահմանադրական ինստիտուտների ձևավորման համար ստեղծում նորմատիվ իրավական հիմքեր, ձևավորում պետական մարմիններ, հանրային իշխանության առանցքային կառույցներ, ընտրում պաշտոնատար անձանց: Ինչպես նշում է Ռ. Ենգիբարյանը, ժամանակակից խորհրդարանը համապետական ներկայացուցչական մարմին է, որի գլխավոր գործառույթը իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանության իրականացումն է: Այն ներառում է նաև պետական գանձարանի բարձրագույն ղեկավարումը, այսինքն՝ պետական բյուջեի ընդունումը և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը: Ցանկացած խորհրդարան ավելի կամ պակաս ծավալով, կախված պետական կառավարման ձևից, նաև վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ³:

Իրավաբանական գրականության մեջ տիրապետող է այն տեսակետը, որ պառլամենտարիզմը գոյություն ունի միայն այն պետություններում, որտեղ պառլամենտն օժտված է ոչ միայն օրենսդրական, այլև պետական մարմինների ձևավորման և վերահսկողության լիազորություններով⁴: Պառլամենտարիզմը՝

¹Арутюнян Г. Г., Баглай М. В., Конституционное право. Энциклопедический словарь, М., 2006, էջ 314:

² Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան: «Տիգրան Մեծ», Երևան, 2007, էջ 17:

³ Енгибарян Р. В., Конституционное развитие в современном мире: основные тенденции, М., 2010, էջ 353:

⁴ Граник И. В., Парламент России, М., 2001, էջ 19:

որպես պետական իշխանությունների կազմակերպման համակարգ, նախատեսում է պառլամենտի գոյությունն ու գործունեությունը՝ օժտված օրենսդիր և վերահսկողական լիազորություններով, հիմնված պետական իշխանության ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական) տարանջատման սկզբունքի վրա, որոնցից յուրաքանչյուրն անկախ է և ինքնուրույն է իրականացնում իր սահմանադրական լիազորությունները¹:

Պառլամենտարիզմի՝ որպես համակարգի առաջընթացի ապահովման կարևոր գրավականը օրենսդիր մարմնի ներկայացուցչական և օրինական (լեգիտիմ) ընտրությունների կազմակերպումն է իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա: Ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է անմիջականորեն՝ ուղղակի մասնակցությամբ, և ներկայացուցչական՝ անուղղակի, միջնորդավորված եղանակներով: Արդի պետություններում ժողովուրդը համապետական ընտրությունների միջոցով ընտրում է պատգամավորներին, կուսակցություններին և կուսակցական դաշինքներին՝ դրանց ծրագրերից ելնելով և իրենց ընտրյալներից ակնկալելով ներկայացված ծրագրերի իրականացում:

Պառլամենտն իր արդյունավետ գործունեությամբ, ընդունված օրենքներով էական ազդեցություն է ունենում ժողովրդավարության ամրապնդման, ժողովրդավարական ինստիտուտների հզորացման, պառլամենտական մշակույթի զարգացման, իշխանության և ընդդիմության երկխոսության կայացման, ընդդիմադիրների իրավունքների ընդլայնման և պաշտպանության գործընթացների վրա:

Պառլամենտն է հաստատում պետական բյուջեն և իրականացնում վերահսկողություն բյուջեի կատարման, վարկերի, օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների օգտագործման նկատմամբ: Պառլամենտին է վերապահված օրենքների ընդունման, միջազգային պայմանագրերի վավերացման (ռատիֆիկացիայի), կասեցման ու չեղյալ հայտարարման (դենոնսացիայի) իրավասությունները և, որպես կանոն, կառավարությանը, վարչապետին անվստահություն հայտնելու գործառույթը: Օրենսդիր, ներկայացուցչական մարմինն է հանդես գալիս հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ, ունի որոշակի լիազորություններ պաշտպանության և անվտանգության ապահովման բնագավառներում: Ժողովրդի կողմից ձևավորված մարմնի առջև կառավարությունը կրում է իրավական և քաղաքական պատասխանատվություն: Պառլամենտի կողմից կառավարությանն անվստա-

¹. Կոստանյան Գ., Ղազանյան Լ., Պառլամենտական իրավունքի հիմունքները Հայաստանի Հանրապետությունում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Լիմուշ», Երևան, 2019, էջ 21:

հոլություն հայտնելու դեպքում, որպես կանոն, կառավարությունը հրաժարական է տալիս¹:

1991 թվականին՝ անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով միջազգային իրավունքի հիմնարար նորմերն ու սկզբունքները, ինչպես նաև արևմտյան կայացած պետությունների զարգացման հարյուրամյակների փորձը, իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա որդեգրեց ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն կառուցելու նպատակը: Անցնող ավելի քան երեք տասնամյակների ընթացքում ՀՀ պետական կառավարման համակարգը սահմանադրական փոփոխություններին համապատասխան փոփոխություններ է կրել և այսօր գործում է կառավարման պառլամենտական ձևը, որը նոր դերակատարություն և գործառույթներ է վերապահել պառլամենտին: Ավելացել է գործադիր իշխանության նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունը: Հանրապետության նախագահի ընտրության, պաշտոնանկ անելու, վարչապետի ընտրության և անվստահություն հայտնելու, Կառավարության վստահության հարցը քննարկելու, հաշվետվություններ լսելու, հրատապ թեմայով քննարկումներ կազմակերպելու, դատական իշխանությունը ձևավորելու, սահմանադրական օրենքներ ընդունելու, Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու և պետության համար կարևորություն ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ լիազորությունները վկայում են պետական իշխանության մարմինների համակարգում պառլամենտի էական տեղի և դերի մասին:

«Խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում կառավարության ստեղծումն ու գոյատևումը կախված են խորհրդարանի վստահությունից»²:

Օրենքների մշակման գործընթացում էական դերակատարություն ունեն Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները: Բոլորովին նոր ինստիտուտ է քննիչ հանձնաժողովը, որը Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող փաստերը պարզելու և Ազգային ժողովին ներկայացնելու գործառույթ է իրականացնում: Քննիչ հանձնաժողովների գործունեության հիմնական ոլորտը գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունն է³: Արդյունավետ խորհրդարանական

¹. Алексеев Д. Б., Актуальные проблемы парламентского государственного контроля // Пробелы в российском законодательстве, 2013, № 6.

². Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության՝ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 116:

³. Տե՛ս Սաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր, Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Քրիստոֆ Դեզենհարթի՝ 2016 թ. օգոստոսի կարծիքը՝ «Պառլամենտական քննիչ

վերահսկողությունը կարող է նպաստել կառավարության կողմից իրականացվող ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև խորհրդարանի կողմից հաստատվելով՝ դրանք ստանում են լեգիտիմության ավելի բարձր աստիճան¹:

Պատգամավորի լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքով, Ազգային ժողովի աշխատակարգով և այլ ակտերով²: Պառլամենտի գործառույթների և լիազորությունների արդյունավետ ու հստակ իրականացումը պայմանավորված է նախ և առաջ պատգամավորների ակտիվ և նպատակային գործունեությամբ, նրանց գիտելիքներով, փորձով, համապատասխան ոլորտների իմացությամբ, իր ընտրողների և կուսակցության առջև պատասխանատվությամբ: ՀՀ օրենսդրությունը պատգամավորին օժտել է լայն լիազորություններով. նա իրավունք ունի հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ, ներկայացնելու Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ, ելույթներ ունենալու, հարցեր տալու և առաջարկներ ներկայացնելու Ազգային ժողովի, հանձնաժողովների նիստերում, խորհրդարանական լսումներում, բանավոր, գրավոր հարցեր ուղղելու Կառավարությանը, ընտրվելու Ազգային ժողովի նախագահ, տեղակալ, հանձնաժողովի նախագահ, տեղակալ, հարցումներով և առաջարկներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, ունենալու երկու օգնական, նույնիսկ դուրս գալու խմբակցության կազմից և այլն (Կանոնակարգի 3-րդ հոդված): ՀՀ Սահմանադրությանը համաձայն՝ պատգամավորն ազատ և անկաշկանդ է իր գործունեությունը ծավալելիս: Ըստ Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար:

Պատգամավորն իրավունքներից բացի ունի պարտականություններ. պարտավոր է ընդգրկվել մշտական հանձնաժողովի կազմում, մասնակցել Ազգային

հանձնաժողովներն ըստ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի, Պառլամենտական քննիչ հանձնաժողովների մասին օրենքի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության» մասին:

¹. West W. F., Cooper J. Legislative Influence v. Presidential Dominance: Competing Models of Bureaucratic Control, Political Science Quarterly, vol. 104, էջ 581-606:

². «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք //

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=110824>

ժողովի, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին, խորհրդարանական լսումներին, պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները, ապահովել պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարումը, այսինքն՝ չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից¹: Միաժամանակ, պարտավոր է կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակում օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացիների գրավոր առաջարկներին, պահպանել Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները²:

Վերը թվարկված ոչ լրիվ ցանկն ապացույց է այն բանի, որ պառլամենտականները պետք է գրագետ ու հասուն լինեն, ունենան որոշումներ կայացնելու և կախատեսումներ անելու ունակություններ, որպեսզի աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում, արցախյան ողբերգության և տարածաշրջանային պայթյունավտանգ իրողությունների պայմաններում կարողանան երկիրը դուրս բերել ծանրագույն իրավիճակներից՝ հարվածի տակ չդնելով հայոց պետականությունը: Հետևաբար անչափ կարևորվում են պատգամավորի թեկնածուներին ներկայացվող սահմանադրական ցենզերը՝ պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումները, որոնք հիմնավորված և ընդունելի պետք է լինեն ընտրողների համար: Փաստ է, որ պասիվ ընտրական իրավունքի իրացման համար էական է ընտրական համակարգի տեսակը՝ մեծամասնական, համամասնական և խառը:

Գործող Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունն ամրագրում է, որ «Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով», սակայն այս կերպ խախտվում է միջազգային իրավական ակտերով և ազգային օրենսդրությամբ սահմանված յուրաքանչյուր քաղաքացու ընտրվելու իրավունքը, քանի որ կուսակցական ցուցակներով ընտրությունների դեպքում բազմաթիվ անկուսակցական, կուսակցական (ու՛մ կուսակցությունը չի մասնակցում ընտրություններին) քաղաքացիներ զրկվում են առաջադրվելու և ընտրվելու իրավունքից: Նկատենք նաև, որ համամասնական

¹. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով //

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723>

². «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք, հոդված 4 //

www.arlis.am/documentview.aspx?docid=110824:

ընտրակարգը սահմանափակում է պատգամավորների ազատ գործունեությունը, քանի որ նրանք նախ հաշվետու են խմբակցությանը, կուսակցությանը և ազատորեն չեն կարողանում իրականացնել իրենց մանդատը: Իրավագիտական միտքը հակված է այն տեսակետին, որ բարձրագույն օրենսդիր, ներկայացուցչական մարմնի անդամը, ներկայացնելով ամբողջ ժողովրդին, պետք է կաշկանդված չլինի հրամայական մանդատով, գործի ազատ՝ առաջնորդվելով իր խղճով և համոզմունքներով, ինչն էլ ամրագրված է գործող Սահմանադրության 94-րդ հոդվածում: Կաշկանդված, կախվածության մեջ գտնվող անձի միտքն ու գործողությունները ևս կաշկանդված են, ազատ չեն, ինչը կարող է բացասաբար ազդել պատգամավորի լիազորությունների իրականացման արդյունավետության վրա:

Ըստ Շառլ Լուի Մոնտեսքիոյի՝ «...չկա այնպիսի բառ, որը կստանար այնքան տարատեսակ արժեքներ ու այդքան տարբեր տպավորություններ կգործեր ուղեղների վրա, որքան «ազատություն» բառը: Ոմանք ազատություն են անվանում կարողությունը գահընկեց անելու նրան, ում իրենք օժտեցին բռնապետական իշխանությամբ, ուրիշները՝ ընտրելու նրան, ում իրենք պետք է ենթարկվեն, երրորդները՝ զենք կրելու և բռնություն կատարելու իրավունքը, չորրորդներն այն տեսնում են իրենց ազգությանը պատկանող մարդու կառավարման ներքո գտնվելու կամ սեփական օրենքներին ենթարկվելու առավելության մեջ...»¹:

Իմանուել Կանտն ազատությունը համարում է անկախություն ուրիշի հարկադրող կամայականությունից²:

Այսինքն՝ ազատությունը մարդուն գործելու հնարավորություն է տալիս իր կամքին և համոզմունքներին համապատասխան: Իսկ համամասնական ընտրակարգով ընտրվելիս պատգամավորն ուղղակի կախման մեջ է իր կուսակցությունից, նրա ղեկավարությունից: Այս ընտրական համակարգի պարագայում ընտրողն իր քվեով ձևավորում է Ազգային ժողովում ուժերի հարաբերակցություն՝ կուսակցությունները ստանում են համապատասխան մանդատներ, որոնցով փորձում են ապահովել ընտրողի կողմից հավանության արժանացած ծրագրերի կենսագործումը: Այս պարագայում պատգամավորը որպես խմբակցության անդամ իր գործունեությունը ծավալում է ընտրողի կողմից հավանության արժանացած ծրագիրն իրականացնելու համար, և նրա ազատության չափը խիստ սահմանափակվում է: Հետևաբար համամասնական ընտրական համակարգը ոչ միայն արգելք է հանդիսանում բազում քաղաքացիների պասիվ ընտրական իրավունքի իրականացման համար, այլև շատ դեպքերում խոչընդոտում է պատգամավորի ազատ գործունեությանը:

¹. Монтескье Ш. Л., О духе законов // Избранные произведения, М., Наука. 1955, էջ 288:

². Кант И., Метафизика нравов // Сочинения, т. 4, Часть 2, М., Норма, 1965, էջ 147:

Պառլամենտի արդյունավետ գործունեության գրավականը ընտրված պատգամավորների մարդկային ու մասնագիտական որակներն են, հարուստ կենսափորձը, պառլամենտական աշխատանքի փորձը, որոնց առկայությունը մեծապես պայմանավորված է սահմանված ցենզերով:

Տարբեր երկրներում սահմանված են պատգամավորների պասիվ ընտրական իրավունքի իրացման տարբեր ցենզեր, որոնք սահմանափակում են մարդու իրավունքները, սակայն որոշակի ժամկետով և ոչ թե ընդհանրապես:

Պասիվ ընտրական իրավունքի սուբյեկտներից, որպես կանոն, ավելի բարձր տարիք է պահանջվում, քան ակտիվ ընտրական իրավունքի սուբյեկտներից այն հիմնավորմամբ, որ անձը պետք է ունենա որոշակի կենսափորձ, որպեսզի կարողանա պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմնում որոշումներ ընդունելիս ճիշտ կողմնորոշվել և խելամտորեն մասնակցել երկրի օրենսդիր մարմնի աշխատանքներին: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել առնվազն 25 տարին լրացած անձը: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված են նաև քաղաքացիության և նստակեցության ցենզերը, որոնց համաձայն՝ պատգամավորի թեկնածուն պետք է առնվազն վերջին 4 տարում հանդիսանա միայն ՀՀ քաղաքացի և վերջին 4 տարում մշտապես բնակված լինի Հայաստանի Հանրապետությունում: Այլ է Նախագահի պարագայում՝ Սահմանադրության 124-րդ հոդվածի 2-րդ մասում Նախագահի թեկնածուի համար սահմանված են 6 տարվա քաղաքացիության և 6 տարվա նստակեցության ցենզեր¹:

Վելուծելով պառլամենտական կառավարման համակարգում պասիվ ընտրական իրավունքի իրականացման համար Հայաստանի Հանրապետությունում սահմանված ցենզերը՝ ակնհայտ է դառնում, որ դրանք ունեն վերանայման կարիք, քանի որ նման լայն լիազորություններով օժտված և իրավական ու քաղաքական մեծ պատասխանատվություն ստանձնող անձինք պետք է անցած լինեն կյանքի լուրջ ճանապարհ և խորը գիտելիքներ ունենան:

Վերը նշվեց, որ գործող Սահմանադրության համաձայն՝ որպես Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու կարող է առաջադրվել 25 տարին լրացած քաղաքացին: Հատկանշական է, որ պասիվ ընտրական իրավունքը Լատվիայում ծագում է 21 տարեկանից, Եվրոպական խորհրդարանում առաջադրվելու համար ծագում է Հունգարիայում՝ 18, Հունաստանում՝ 25, իսկ Ֆրանսիայում՝ 23 տարեկանից²:

¹ՀՀ Սահմանադրություն (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), Երևան, 2015 // <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>

² Лафитский В. И., Выборы в Европейский Парламент, 2005, էջ 59:

Պատգամավորը բովանդակային գնահատականներ է տալիս հասարակական հարաբերություններին, ձևակերպում դրանց կարգավորմանը միտված իրավական նորմեր ու սկզբունքներ: Իսկ սկզբունքային և անաչառ գնահատումն իմացական-արժեքային գործընթաց է, որը պետք է խարսխվի ճշմարտության հարացույցի վրա: Սոցիալական պրակտիկական ապացուցում է, որ ճշմարտությունը հաստատվում է երկար տարիների ընթացքում, իսկ մարդն ապրում և գործում է իր արժեքային կողմնորոշումներով: Օբյեկտիվ ճշմարտության որոնումները գիտական իմացության մեջ անիմաստ է առանց արժեքային գործոնների, առանց սուբյեկտի սոցիալ-քաղաքական, աշխարհայացքային և բարոյական դիրքորոշումների, որոնց մեջ խտացված են հասարակական շահերն ու հումանիստական արժեքները¹:

Ակնհայտ է, որ գնահատականը պայմանավորված է գնահատողի աշխարհայացքից, գիտելիքներից ու փորձից, հմտություններից, մարդկային որակներից, անցած ճանապարհից, գործնական և տեսական իմացությունից, հասարակական երևույթների, ազգային շահի, պետության առաջնահերթությունների վերաբերյալ ունեցած սոցիալ-քաղաքական դիրքորոշումներից:

Իսկ ընդամենը 25 տարեկան, առանց աշխատանքային փորձի, բարձրագույն կրթություն չստացած, կենսափորձ և լայն աշխարհայացք չունեցող պատգամավորի գնահատականները տեսական հարցերի, իրական կյանքի երևույթների, խնդիրների և դրանց գործնական լուծումների վերաբերյալ չեն կարող լինել հիմնավոր և օբյեկտիվ, այլ կարող են կրել միայն կամային, խմբակային կամ ընդգծված սուբյեկտիվ բնույթ:

Հաշվի առնելով պառլամենտական կառավարման պայմաններում Ազգային ժողովի առանցքային դերը պետական իշխանության համակարգում և պատգամավորի՝ որպես Ազգային ժողովի մարմնի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության ծավալը՝ անհրաժեշտ ենք համարում պատգամավորի թեկնածուի համար սահմանադրորեն ամրագրել առնվազն 30 տարին լրացած լինելու պահանջը: Նա պետք է առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ ունենա՝ պետական իշխանության բարձրագույն մարմնում աշխատելու, այլոց իրավունքներն ու պարտականությունները սահմանելու համար: Իհարկե, սրան զուգահեռ անչափ կարևորվում է անձի բարձրագույն կրթություն ունենալու հանգամանքը: Սահմանադրական գրեթե բոլոր ինստիտուտների ղեկավարների, անդամների համար կա հստակ պահանջ, որ նրանք պետք է ունենան բարձրագույն կրթություն (օրինակ՝ Վճռաբեկ դատարանի դատավորը, Հաշվեքննիչ պալատի անդամը, նախագահը,

¹. Հակոբյան Ս. Մ. Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2009, էջ 304:

Կենտրոնական բանկի նախագահը, խորհրդի անդամը, Մարդու իրավունքների պաշտպանը, դատավորը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, անդամը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամը և այլն), հասարակության մեջ ունենան ճանաչում և բարձր հեղինակություն (Մարդու իրավունքների պաշտպանը, Բարձրագույն դատական խորհրդի անդամը, Սահմանադրական դատարանի դատավորը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամը): Սահմանադրորեն մի շարք պաշտոնատար անձանց թեկնածուների համար նշված է նաև տարիքը (Հանրապետության Նախագահի, Սահմանադրական դատարանի դատավորի, Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի համար՝ առնվազն 40 տարեկան, Գլխավոր դատախազի թեկնածուի համար՝ առնվազն 35 տարեկան) և նախատեսված են այլ պահանջներ: Սակայն Սահմանադրությունը «լռում» է պատգամավորի, կառավարության անդամի բարձրագույն կրթություն ունենալու, զինված ուժերում ծառայելու, կենսափորձի, հասարակության մեջ ճանաչում և բարձր հեղինակություն վայելելու, մարդկային որակների, դատված չլինելու հանգամանքի, անգամ առողջական վիճակի մասին: Բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանց համար համապարտադիր վարքագծի կանոններ սահմանող պատգամավորի կամ կոնկրետ ոլորտը ղեկավարող նախարարի պարագայում ինչու՞ չպետք է պարտադիր համարվի բարձրագույն մասնագիտական կրթությունը, այն էլ, մեր կարծիքով, առնվազն մագիստրոսի որակավորման առկայությունը: 21-րդ դարում բարձրագույն կրթություն չստացած անձը ինչպե՞ս կարող է պետության առանցքային մարմնում դերակատարություն ունենալ՝ կարծիք հայտնել քննարկվող հարցի վերաբերյալ, առաջարկություն անել, միջազգային կառույցներում տեսակետ հայտնել և երկրի շահը ներկայացնել, պաշտպանել իր ընտրողի իրավունքները... Երբ ուսումնասիրում ենք իշխանության մյուս թևի՝ դատական իշխանության ներկայացուցիչներին առաջադրվող պահանջները, ակնհայտ է դառնում դրանց ծանրակշիռ և հիմնավորված լինելը: Ստացվում է, որ դատական իշխանությունը ձևավորող մարմինը կարող է իր անդամների մասնագիտական որակներով, կրթական ցենզով, փորձով և գիտելիքներով բավականին զիջել դատական մարմիններին: Այսպես, Սահմանադրական դատարանի դատավորը, որը պետք է լինի քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբան՝ ընտրվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Այսինքն՝ պատգամավորների ճնշող մեծամասնությունը պետք է գնահատի,

հարցեր տա, հետևություններ անի նման բարձր ցենզերի համապատասխանող թեկնածուներին ընտրելու վերաբերյալ:

Կարծում ենք՝ միայն բարձրագույն կրթություն ունենալը չպետք է բավարար լինի պառլամենտական գործունեություն ծավալելու համար, այլ պատգամավորի թեկնածուները պետք է անցնեն հատուկ մասնագիտական դասընթացներ: Օրինակ՝ Անգլիայում պատգամավոր ընտրվելու համար կարևոր նախապայման է ուսումնառությունը համապատասխան պատգամավորական դպրոցում, որտեղ վերջիններս ուսումնասիրում են օրենսդրության բացերը, մարտահրավերները, զարգացման տարբեր ուղիներ են քննարկում, այդպիսով բավականին փորձառու են դառնում մինչև պառլամենտական դառնալը: Կամ Հայաստանում դատական, դատախազական, քննչական համակարգերում աշխատանքի անցելու համար, բացի բարձրագույն կրթությունից, պահանջվում է նաև Արդարադատության ակադեմիայում ուսումնառություն անցած և համապատասխան քննություն հանձնած լինելու մասին հավաստող ավարտական փաստաթուղթ:

Մյուս կողմից էլ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը (5-րդ հոդվածի 2-րդ մաս) սահմանում է, որ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը պետական քաղաքական պաշտոն է¹, հետևաբար յուրաքանչյուր քաղաքացի, ով կհավակնի այդ պաշտոնին, պետք է ունենա պառլամենտում աշխատելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ, որը հնարավոր է ձեռք բերել համապատասխան մասնագիտացված հաստատությունն ավարտելուց հետո եվրոպական մի շարք երկրների և մեր դատական իշխանության օրինակով: Գուցե ժամանակն է հիմնել Պատգամավորական դպրոց, որտեղ պարտադիր կուսուցանեն այն քաղաքացիները, ովքեր ցանկություն ունեն մասնակցելու ընտրություններին:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պատգամավորի թեկնածուի համար նախատեսված քաղաքացիության և նստակեցության ցենզերը վերանայվեցին և 5 տարվա փոխարեն սահմանվեց 4 տարին: Կան երկրներ, որտեղ ավելի ցածր կամ բարձր քաղաքացիության և նստակեցության ցենզեր են սահմանված: Այսպես, Բելգիայում անհրաժեշտ է մշտապես բնակվել առնվազն 6 ամիս, Ֆինլանդիայում՝ 1 տարի, Նորվեգիայում՝ 5 տարի²: Համեմատելով արևմտյան երկրների հետ, գտնում ենք, որ կարելի է փոփոխել նաև նստակեցության և քաղաքացիության ցենզերը՝ դարձնելով 3 տարի, քանի որ հայ ժողովրդի 2/3-ը բնակվում է Հայաստանի սահմաններից դուրս, և Հայաստան վերադարձողների համար ևս պետք է պառլամենտում

¹. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832>

². Խաչատրյան Հ., Պառլամենտ և պատգամավոր, «Արեգ», Երևան, 1994, էջ 15:

ընտրվելու պայմաններ ստեղծել: Նման պարտադիր նորմերը հնարավորություն կտան որակական նոր մակարդակի հասցնել պառլամենտը, որը կոչված է կարգավորելու կարևոր և բարդ քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, պաշտպանական, անվտանգության ապահովման և այլ հարաբերություններ:

Այսօր առավել կարևորվում է պառլամենտի անդամի դերն ու պատասխանատվությունը բարձրագույն օրենսդիր մարմնում գործունեություն իրականացնելիս: Պատգամավորն իր աշխատանքով, իր վարքագծով, իր հեղինակությամբ պետք է օրինակելի լինի: Կարծում ենք, որ նա.

1. որպես ներկայացուցչական մարմնի անդամ՝ պետք է ունենա անհրաժեշտ գիտելիքներ, հմտություն և փորձ՝ իր ընտրողների իրավունքներն ու օրինական շահերը պատշաճ ներկայացնելու և պաշտպանելու, օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու, օրենքների մշակմանը մասնակցելու, պառլամենտական գործիքակազմի միջոցով գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, պետության պաշտպանության ապահովմանը, անվտանգության ամրապնդմանը և հասարակական-քաղաքական հարաբերությունների արդյունավետ կարգավորմանը նպաստելու, ինչպես նաև միջազգային կառույցներում որպես Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ հանդես գալու, պետության շահը ներկայացնելու և պաշտպանելու, ազգագույն խորհրդարանական դիվանագիտություն վարելու համար: «Խորհրդարանական դիվանագիտությունը միջոց է, որով երկու կամ ավելի խորհրդարաններ կազմակերպում են շարունակական երկխոսություն՝ միջազգային առանցքային հիմնախնդիրների շուրջ», -նշված է խորհրդարանական զարգացման վերաբերյալ գիտելիքների գլոբալ ու առաջատար հարթակի՝ AGORA-ի կայքում¹: Պառլամենտական դիվանագիտությունը կարելի է բնորոշել որպես պառլամենտականների կողմից իրականացվող գործողությունների ամբողջություն, որն ուղղված է արտաքին քաղաքական որոշակի նպատակներին հասնելու գործընթացում քաղաքական երկխոսությունն առաջ տանելուն, վստահության մթնոլորտի ձևավորմանը, դիվանագիտության ճկուն միջոցների գործադրմամբ քաղաքական գործընթացի մասնակիցների միջև փոխըմբռնման խորացմանն ու լուծումներ գտնելուն:

2. Հետևաբար պետք է բարձրացնել պատգամավորի թեկնածուի համար նախատեսված տարիքային ցենզը: Աշխատանքային փորձը, գիտելիքների

¹. Portal for Parliamentary Development:Home: Resources: Areas of Expertises: Parliamentary

Diplomacy, <http://www.agoraparl.org/resources/aoe/parliamentaryinstitution/parliamentary-diplomacy/>, /10.10.2021/:

պաշարը խիստ անհրաժեշտ են պատգամավորական գործունեություն ծավալելու համար, որը 25 տարեկան երիտասարդը գրեթե չունի, քանի որ ՀՀ-ում իրականացված կրթական համակարգի փոփոխությունները հանգեցրել են նրան, որ ներդրվել է 12-ամյա հանրակրթություն, իսկ բուհերում գործում է երկաստիճան համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Այս դեպքում իգական սեռի ներկայացուցիչները լավագույն դեպքում բուհն ավարտում են 24, իսկ տղաները զինված ուժերում ծառայելուց հետո՝ 26 տարեկանում: Ուստի նրանք չեն կարող ունենալ աշխատանքային անհրաժեշտ փորձ և պրակտիկ գիտելիքներ: Ակնհայտ է, որ սահմանադրորեն նախատեսված տարիքային ցենզը (25 տարեկան լրացած լինելը) անփորձ, պառլամենտական աշխատանքից հեռու մարդկանց համար ճանապարհ է հարթում դեպի պառլամենտ: Վերջին շրջանի պառլամենտական պրակտիկան ցույց է տալիս, որ օրենսդիր մարմնում որոշակի թիվ են կազմում այն պատգամավորները, որոնց աշխատանքային կենսագրությունը սկսվում է Ազգային ժողովից, այն էլ որպես պատգամավոր, այսինքն՝ պետական բարձրագույն իշխանության մարմնի անդամ: Այսպիսի «շռայլություն» իրեն թույլ չի տա անգամ զարգացած քաղաքական-տնտեսական համակարգ ունեցող երկիրը: Արդի լարված աշխարհաքաղաքական իրավիճակում անչափ կարևորվում է օրենսդիր մարմնում կյանքի լուրջ ճանապարհ անցած, բանիմաց, կարող, վերլուծելու, կանխատեսելու հատկություններով օժտված, իրավիճակը ճիշտ գնահատող, ազգային շահի համար պայքարող անհատների առկայությունը: Նման պահանջ կա սահմանադրական այլ մարմինների համար:

ՀՀ Սահմանադրությունը, «Հանրային ծառայության մասին» օրենքը և նորմատիվ իրավական այլ ակտեր ամրագրում են, որ հանրային ծառայության միջին և բարձր օղակներում չեն կարող աշխատել մարդիկ, ովքեր գոնե 3-5 տարվա աշխատանքային ստաժ չունեն: Անգամ ընտրական տարածքային հանձնաժողովի անդամից են պահանջում իրավաբանական բարձրագույն կրթություն և աշխատանքային ստաժ: Իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի համար անհասկանալիորեն աշխատանքային ստաժի պահանջ չի առաջադրվում:

3. Գտնում ենք, որ պետության համար ճակատագրական որոշումներ կայացնող անձը պետք է ունենա առնվազն 5 և ավելի տարիների մասնագիտական աշխատանքի փորձ և բոլորած լինի 30 տարին: Նա պետք է լինի կայացած մասնագետ, ներդրում ունենա իր ոլորտում, անցած լինի որոշակի աշխատանքային ճանապարհ, կոլեկտիվում կարողանա իրեն դրսևորել՝ վայելելով բարձր հեղինակություն, ունենա մարդկային, ազգային որակներ և, անշուշտ, ունենա բարձրագույն կրթություն, դատված չլինի, իսկ տղամարդիկ պետք է ծառայած լինեն զինված ուժերում: Կուսակցությունները այս բոլոր պահանջները

բավարարող թեկնածուներին միայն պետք է առաջադրեն որպես պատգամավոր: Հակառակ դեպքում ո՞ր հատկանիշն են հաշվի առնում, որ 25 տարեկանին առաջադրում կամ ընտրում են պատգամավոր:

4. Հաշվի առնելով մեծաթիվ Սփյուռք ունենալու հանգամանքը՝ կարծում ենք, որ սահմանադրական փոփոխությունների ժամանակ կարելի է նստակեցության և քաղաքացիության ցենզերը չորս տարվա փոխարեն նախատեսել երեք կամ երկու տարին:

5. Արական սեռի ներկայացուցիչների համար պետք է որպես պարտադիր ցենզ սահմանել զինված ուժերում ծառայած լինելը, քանի որ աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում անվտանգության, պաշտպանության հիմնախնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելիս պառլամենտականները պետք է համապատասխան փորձ ունենան, իրազեկ և գիտակ լինեն, ճիշտ կողմնորոշվեն:

6. Սահմանադրորեն նախատեսված է, որ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձը: Այսինքն՝ երկքաղաքացիների պասիվ ընտրական իրավունքը Սահմանադրությամբ արգելված է: Իսկ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: «Հանրային ծառայության մասին» օրենքը պետական կարևորագույն պաշտոններ զբաղեցնելու իրավունքի սահմանափակումներ է ամրագրում: Մասնավորապես երկքաղաքացիները չեն կարող զբաղեցնել Հայաստանի Հանրապետության նախագահի, պատգամավորի, վարչապետի, փոխվարչապետի, նախարարի, ՀՀ սահմանադրական, վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի դատարանների դատավորի, գլխավոր դատախազի, բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնները¹: «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացիության հետ միաժամանակ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում անձը ենթակա է ծառայությունից արձակման²: «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների համաձայն՝ ոստիկանության ծառայողը, բացառությամբ ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողի, կարող է միաժամանակ լինել այլ պետության քաղաքացի: Ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողի կողմից այլ պետության քաղաքացիություն

¹. ՀՀ Սահմանադրության հոդվածներ 48, 124, 148, 165, 174, 177, 192, 195, 201:

². <https://www.arlis.am/documentview.aspx?docID=106482>

ձեռք բերելու դեպքում՝ ծառայողը ազատվում է ծառայությունից¹: Մարդու իրավունքների պաշտպանի համար նույնպես սահմանված է վերջին 4 տարում ՀՀ քաղաքացի լինելու պահանջ, իսկ պաշտոնից ազատման հիմքերի շարքում նախատեսված է այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու հանգամանքը²: Այսինքն՝ երկքաղաքացիների կողմից կարևոր հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու արգելքը սահմանված է Սահմանադրությամբ, իսկ մյուս հանրային պաշտոնների համար նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք գործող Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասը վերաշարադրել հետևյալ կերպ. «Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել երեսուն տարին լրացած, վերջին երեք տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին երեք տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթություն (բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան) ունեցող, դատվածություն չունեցող, զինված ուժերում ծառայած (արական սեռի թեկնածուների համար), պատգամավորական դպրոցն ավարտած, հայերենին տիրապետող քաղաքացին»:

Օգտագործված գրականության ցանկ

1. **ՀՀ Սահմանադրություն**, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, Երևան, 2015:
2. **Խաչատրյան Հ.**, Պառլամենտ և պատգամավոր, «Արեգ» Երևան, 1994, էջ 15:
3. **Հակոբյան Հ. Հ.** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, «Տիգրան Մեծ», Երևան, 2007:
4. **Հակոբյան Ս. Մ.**, Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2009, էջ 304:
5. **Շաքարյան Թ.**, ՀՀ երկքաղաքացիների՝ հանրային ծառայության անցնելու առանձնահատկությունները սահմանադրական բարեփոխումների խորապատկերում, «Հանրային կառավարում», № 1-2, Երևան, 2018, էջ 166:

¹. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=58297>

². Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներ // <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123524>: Տե՛ս նաև Շաքարյան Թ., ՀՀ երկքաղաքացիների՝ հանրային ծառայության անցնելու առանձնահատկությունները սահմանադրական բարեփոխումների խորապատկերում // Հանրային կառավարում, № 1-2, 2018, էջ 166 // https://paara.am/wp-content/uploads/2023/07/HK-2018_1-2.pdf:

6. Պառլամենտական իրավունքի հիմունքները Հայաստանի Հանրապետությունում, Ոսումնամեթոդական ձեռնարկ, **Գ. Կոստանյան, Լ. Ղազանջյան**, «Լիմուշ», Երևան, 2019, էջ 21:

7. **Պողոսյան Վ., Սարգսյան Ն.**, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 116:

8. Սաքսոնիայի սահմանադրական դատարանի դատավոր, Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր **Քրիստոֆ Դեգենհարթի**՝ 2016թ. օգոստոսի կարծիքը՝ «Պառլամենտական քննիչ հանձնաժողովներն ըստ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի, Պառլամենտական քննիչ հանձնաժողովների մասին օրենքի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության» մասին:

9. **Алексеев Д. Б.**, Актуальные проблемы парламентского государственного контроля // Пробелы в российском законодательстве, 2013, № 6.

10. **Арутюнян Г. Г., Баглай М. В.**, Конституционное право. Энциклопедический словарь, М., 2006, էջ 314:

11. **Граник И. В.**, Парламент России, М., 2001, էջ 19:

12. **Енгибарян Р. В.**, Конституционное развитие в современном мире: основные тенденции, М., 2010, էջ 353:

13. **Зеленков М. Ю.**, Политология для юристов, М., 2000, էջ 60-61:

14. **Кант И.**, Метафизика нравов // Сочинения, т. 4, Часть 2, М., Норма, 1965, էջ 147:

15. **Лафитский В. И.**, Выборы в Европейский Парламент, 2005, էջ 59:

16. **Монтескье Ш. Л.**, О духе законов // Избранные произведения, М., Наука, 1955, էջ 288:

17. Portal for Parliamentary Development: Home: Resources: Areas of Expertises: Parliamentary Diplomacy.

18. **West W. F., Cooper J.** Legislative Influence v. Presidential Dominance: Competing Models of Bureaucratic Control, Political Science Quarterly, vol. 104, էջ 581-606:

Համացանցային աղբյուրներ

1. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=110824>
2. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723>
3. www.arlis.am/documentview.aspx?docID=102510
4. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832>

5. <http://www.agoraparl.org/resources/aoe/parliamentaryinstitution/parliamentary-diplomacy/>, /10.10.2021/:
6. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=106482>
7. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=58297>
8. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123524>
9. https://paara.am/wp-content/uploads/2023/07/HK-2018_1-2.pdf

**ON THE REVIEW OF REQUIREMENTS SUBMITTED TO THE DEPUTY OF THE
NATIONAL ASSEMBLY UNDER THE CONSTITUTION OF THE REPUBLIC OF
ARMENIA**

HRANUSH HAKOBYAN

Doctor of Law, Professor

Lecturer of Gavar State University and

Public Administration Academy of the Republic of Armenia

e-mail: hranush.hranti@gmail.com

RUZANNA HAKOBYAN

Rector of Gavar State University,

Doctor of Law, Associate Professor

e-mail: ruzanna.hakobyan@mail.ru

The article refers to the new role assumed by the National Assembly, the expansion of its functions and powers during the transition to the parliamentary form of government in accordance with the 2015 constitutional amendments of the Republic of Armenia, the constitutional demands presented to the Deputy in that context and the issues of their review. In order to achieve the proposed goal, reference was made to the control powers of the National Assembly (NA), to the censures presented to the candidate for the Deputy of the National Assembly provided for in Article 48, Part 2 of the Constitution, and their expediency. Both general research methods (general theoretical, historical, analytical), as well as special professional methods (systemic-structural, legal comparative, etc.) have been applied. As a member of the highest legislative body, the Deputy carries out his activities in the spheres of domestic and parliamentary diplomacy, participates in making decisions that are crucial for society and the state, therefore the deputy must have life experience, general work experience, experience of conducting professional activity, high reputation, be endowed with human, national qualities and have a higher education, have not been convicted, and, in case of men, have served in the armed forces. The transition from

the semi-parliamentary government system to the parliamentary government should also lead to the stricter requirements for the Deputy of the National Assembly and the limitations of passive electoral right, which have become the subject of discussion in this article.

Keywords: *Republic of Armenia, Constitution, National Assembly, Deputy, censure, requirements, authority, function, control, citizenship, party.*

О ПЕРЕСМОТРЕ ТРЕБОВАНИЙ, ПРЕДЪЯВЛЯЕМЫХ ДЕПУТАТУ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ В СООТВЕТСТВИИ С КОНСТИТУЦИЕЙ РА

АКОБЯН ГРАНУШ

*Доктор юридических наук, профессор
Преподаватель Гаварского государственного университета и
Академии государственного управления Республики Армении
электронная почта: hranush.hranti@gmail.com*

АКОБЯН РУЗАННА

*Ректор Гаварского государственного университета
Доктор юридических наук, доцент
электронная почта: ruzanna.hakobyan@mail.ru*

В статье обсуждаются новая роль Национального Собрания при переходе к парламентской форме правления в соответствии с конституционными изменениями Республики Армения 2015 года, вопросы расширения функций и полномочий законодательного органа, а также конституционные требования, предъявляемые депутату в этом контексте и необходимость их пересмотра. Для достижения поставленной цели были проанализированы контрольные полномочия Национального Собрания (НС), предъявляемые кандидату в депутаты НС цензы, предусмотренные частью 2 статьи 48 Конституции РА, и их целесообразность. Использовались как общенаучные методы исследования – сравнительный, исторический, аналитический, так и специальные профессиональные методы – системно-структурный, сравнительно-правовой и др. Будучи членом высшего законодательного органа, депутат НС осуществляет свою деятельность как во внутригосударственной сфере, так и в сфере парламентской дипломатии, участвует в принятии решений, важных для общества и государства, поэтому он должен иметь жизненный опыт, стаж профессиональной работы, высокую репутацию, быть наделён человеческими, национальными качествами и

обязательно иметь высшее образование, не быть судимым и нести службу в Вооруженных силах (для мужчин). Переход от полупарламентской системы к парламентской системе правления должен также привести к пересмотру требований к депутату Национального Собрания, ограничениям пассивного избирательного права, которые и стали предметом обсуждения в данной статье.

Ключевые слова: Республика Армения, Конституция, Национальное Собрание, депутат, цензы, требования, полномочия, функция, контроль, гражданство, партия.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.03.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 16.03.2024թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: